

«ՀԱՏՆԵԼԻ ՎԱՐՈՒՅՆ» ՈՒ XV—XVIII ԴԱՐԵՐԻ ՀԱՅ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐՁԱԿԸ

Ք. Ս. ՏԵՐ-ԴԱՎԹԵԱՆ

XV—XVIII դարերի թարգմանական արձակը քիչ է ուսումնասիրված: Դեռևս ի մի հավաքված չեն ուշ միջնադարի այդ կարգի հուշարձանները: Դրանց մի մասը ցրված է ձեռագրերում, իսկ մի մասը, հակառակ նրան, որ ժամանակին տպագրվել է, տարբեր պատճառներով անուշադրության է մատնվել: Ուսումնասիրողը փաստորեն ձեռքի տակ ունի հնատիպ թարգմանական երկերի մի շարք, որի ինչ լինելը անհայտ է: Այստեղ քիչ տեղ չեն գրավում նաև այն երկերը, որոնք գնահատվել են որպես եկեղեցական, դավանաբանական և շրջանցվել, թեև հայտնի է, որ հին ու միջնադարյան գեղարվեստական արձակի փոքրածավալ ժանրերը, հատկապես պատմողական արձակը, անսպառ աղբյուր է հանդիսացել քարոզչության և այլ ժողովածուների համար: Եվ հաճախ հենց այդպիսի ժողովածուների շնորհիվ են պահպանվել և մեղ հասել հին շրջանի պատմողական արձակի բազմաթիվ նմուշներ: Այդ ժամանակաշրջանի գրականության ավելի խոր ուսումնասիրությունը մեծ կարևորություն ունի նաև նոր գրականության առաջացման և զարգացման պատմության տեսակետից, րանի որ նշված դարերը կազմում են այն միջնորդ ժամանակահատվածը, որը մի կողմից նոր դարաշրջանին փոխանցեց հայ բազմադարյան գրականության հարուստ ժառանգությունը, մյուս կողմից բարենպաստ հող պատրաստեց հայ նոր գրականության ծլարձակման համար:

XV—XVIII դդ. հայ գրականության մեջ կարելի է գնահատել որպես հայարևմտանվորական գրական կապերի խորացման շրջան: Այդ կապերի սկիզբը դրվեց XII դարում, երբ լատիներենից հայերեն թարգմանվեցին մի շարք վարքագրական հուշարձաններ, ներսես Լամբրոնացին (XII դար) թարգմանեց Գրիգոր Մեծի «Տրամախոսությունը»¹, ապա եվրոպական արձակից նոր շերտ թափանցեց հայ մատենագրություն XIII—XIV դդ.՝ կաթոլիկ քարոզիչների շնորհիվ:

XV—XVIII դդ. Արևմուտքի գեղարվեստական արձակը հայ մատենագրություն է մտնում շատ ավելի լայն ալիքով: Պետք է ընդգծել, որ նշված ժամանակի թարգմանությունները գրեթե անխափր միջնադարյան, այդ թվում և նրա կողմից ժառանգած անտիկ և հռոմեական շրջանների փոքր տեսակի պատմողական արձակի ժողովածուներ են: Դա արդյունք էր մի կողմից դավանաբանական վեճերի և պայքարի սրված մթնոլորտում հորդ հոսանքով հայ մատենագրություն թափանցող քարոզչական գրականության, որն իր հետ բերում էր հսկայական չափերի հասնող պատմողական արձակ, մյուս կողմից՝ հայ գրականության աշխարհականացման պրոցեսի խորացման, երբ պատմողական ժանրերը, ժողովրդական ստեղծագործությունը հետզհետե գերիշխող էին դառնում: Անշուշտ հայ թարգմանիչները ազդվել են նաև ժամանակի եվրոպական գրականության մեջ տեղի ունեցող խմորումներից: Հատկապես կրկին արթնացավ հետաքրքրությունը դասական գիտության և գրականության նկատմամբ, մի բան, որ համապատասխանում էր նաև հայ հասարակության

¹ Տե՛ս «Գրիգորի սրբազան պապու Հռովմայ Բանք պատմողականք առ Պետրոս նախա-սարկաազ իւր» տե՛ս Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 4947 (այսուհետև նշվելու են միայն Մաշտոցի անվ. Մատենադարանի ձեռագրերի համարները):

նոր դասի՝ բուրժուազիայի շահերին: Անհրաժեշտ է նաև ընդգծել հայերի համառ հանգրվան դարձած երկրների անմիջական ազդեցությունը: Հայ գաղութների ներկայացուցիչները ապրել և գործել են համապատասխան երկրների մշակութային մթնոլորտում և ստացել են նույն հոգևոր սնունդը: Եվ այդ երկրները, հատկապես լեհաստանն ու Իտալիան, ոչ միայն միջնորդի դեր են խաղացել եվրոպական գրականությանը հայերին հաղորդակից դարձնելու գործում, այլև իրենք անմիջական գրական կապերի մեջ են եղել հայերի հետ:

XVII—XVIII դդ. հայ մատենագրությանը տվել են մի շարք ականավոր և բազմաբեղուն թարգմանիչների, որոնցից էին հայ բանաստեղծ, լեհահայ գաղութի գրական մշակութային գործիչ, Զամոստյե քաղաքի երեց Հակոբ Թոխաթեցին², լեհահայ գաղութի հասարակական մշակութային գործիչ, լիովի ավագերեց Զաքարիա Բեռնատովիչը³, լեհահայ գաղութի ծնունդ, հայ խոշորագույն գրական գործիչ, փիլիսոփա, մանրանկարիչ Ստեփանոս լեհացին⁴, հայ տպագրության երախտավոր, մի շարք երկերի հեղինակ Հովհաննես Հոլովը⁵, Հովհաննես Կոլտի աշակերտ և գործակից Ղուկաս Խարբերդցին⁶, նույն դպրոցի գրական գործիչ Պետրոս Թիֆլիզեցին⁷, Պոլսի պատրիարք, խոշոր գրական գործիչ Հակոբ Նալյանը⁸, Պետրոս վարդապետ Կոստանդնուպոլսեցին⁹, Վենետիկյան Մխիթարյան միաբանության վարդապետ Հովհան Թոխաթեցին¹⁰, Մխիթար Սեբաստացու աշակերտ Զաքարիա Ակնեցին¹¹ և այլք:

Իրենց բեղմնավոր թարգմանչական գործունեությամբ հատկապես աչքի ընկան Ստեփանոս լեհացին, Հովհաննես Հոլովը և Ղուկաս Խարբերդցին: Մի շարք թարգմանական երկեր մեծ տարածում ստացան հայ մատենագրության մեջ, հարստացրեցին հայ պատմողական արձակը և որոշակի դեր խաղացին հայերենի զարգացման գործում: Այդ տեսակետից հատկապես նշանակալից է եղել Ստեփանոս լեհացու թարգմանչական գործունեությունը, որի ճիշդում պարզ է և կանոնավոր, հեռու մնացած է թե լատինաբանութեն և թե ռամկա-

² Հակոբ Թոխաթեցու կենսագրության և գրական ստեղծագործական ժառանգության մասին տե՛ս Ն. Ա. Կիրյան. Հինգ պանդուխտ տաղասացներ. Վիեննա, 1921, էջ 178—202, 4. Խաչատրյան. Հայ միջնադարյան պատմական ողբեր. Երևան, 1969, էջ 146—176:

³ Զաքարիա Բեռնատովիչի մասին տե՛ս Հ. Անասյան. Հայկական մատենագիտություն. Հ. Բ. Երևան, 1976, էջ 1479—1474:

⁴ Ստեփանոս լեհացու կենսագրության կարևորագույն աղբյուրն է Առաքել Դավրիժեցին, Տե՛ս Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցույ. Վաղարշապատ, 1896, էջ 407—409: Այդ մասին տե՛ս նաև Ն. Ա. Կիրյան. Ստեփանոս վարդապետ լեհացի.— «Հանդես ամսօրյա», 1912, էջ 62—66: Ք. Տեր-Դավթյան. «Հայելի վարուցի»-ի հայերեն թարգմանության հարցի շուրջ.— ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1981, № 10, էջ 90—99: Հ. Միրզոյան. XVII դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն. Երևան, 1983, էջ 101—103:

⁵ Հովհաննես Հոլովի կենսագրության մասին տե՛ս Ա. Ալպոյաճյան. Պատմություն հայ դպրոցի. Հ. Ա., 1904, էջ 418—419: Լեռ. Հայկական տպագրություն. Հ. Ա., XVI—XVII դդ., Թիֆլիզ, 1904, էջ 304 և հտ.: Ռ. Իշխանյան. Հայ գրքի պատմություն. Երևան, 1977, էջ 500—507:

⁶ Ղուկաս Խարբերդցու և նրա թարգմանությունների մասին տե՛ս Բ. Կյուլիսեբյան. Կոլտ Հովհաննես պատրիարք. Վիեննա, 1957, էջ 69—167, նաև՝ Գ. Գալեմբեյան. Կենսագրություն Սարգիս արքեպիսկոպոս Սարաֆյան. Վիեննա, 1903, էջ 167—171:

⁷ Պետրոս Թիֆլիզեցին հեղինակ է մի շարք թարգմանությունների:

⁸ Նալյանի մասին տե՛ս Մ. Զամչյան. Պատմություն հայոց. Հ. Գ., Վենետիկ, 1786, էջ 812—874: Մ. Օրմանյան. Ազգապատում. Պեյրութ, 1960, էջ 2919—3041: Հ. Աճառյան. Հայոց անձնանունների բառարան. Հ. Գ., Երևան, 1946, էջ 515:

⁹ Պետրոս վարդապետ Կոստանդնուպոլսեցու գրական ժառանգության մասին տե՛ս Ա. Մրապյան. Հայ միջնադարյան գրույցներ. Երևան, 1969, էջ 49:

¹⁰ Հովհան Թոխաթեցու թարգմանությունների մասին տե՛ս ստորև, էջ 16—17:

¹¹ Զաքարիա Ակնեցու թարգմանությունների մասին տե՛ս ստորև, էջ 17:

խոստովենե, այս տեսակետով հայերենի վերակենդանության համար սակավ արդյունավետ չէ եղած Ստեփանոս Ե յուր դպրոց՝ Մխիթարեն առաջ»¹²:

1. XVII—XVIII դդ. թարգմանական արձակի շարքում հայ մատենագրության մեջ խոր հետք թողած երկը «Հայելի վարուց» ժողովածուն է:

Նրա լատինական բնօրինակը՝ «Հայելի օրինակաց»-ը («Speculum exemplorum») ստեղծվել է 1480 թ. և կազմողի մահից մեկ տարի հետո հրատարակվել է Հոլանդիայում¹³: 1605 թ. ժողովածուն լրացրել և վերամշակել է բելգիացի մատենագիր Հովհաննես Մայորը՝ կոչելով այն «Մեծ հայելի» («Speculum Magnum»)¹⁴:

«Մեծ հայելին» նախատեսված էր քարոզիչների համար, որոնք կենդանի օրինակներով կարող էին ավելի մեծ հաջողությամբ ազդել հավատացյալների վրա քրիստոնեական բարոյախոսության տարածման գործում: Սակայն նրա կենսունակության և երկար գոյատևման գաղտնիքը սյուժեների և մոտիվների հարստության մեջ էր: «Մեծ հայելին» IV—XVI դդ. միջնադարյան եվրոպական փոքրածավալ արձակի մի շտեմարան էր:

XVII—XVIII դդ. ժողովածուն լայն տարածում է գտնում, բազմիցս հրատարակվում և ամեն անգամ լրացվում է խմբագիրների և հրատարակիչների կողմից, իսկ նրանում ամփոփված երկերի թիվը հասնում է 80-ի: XVII դարի ընթացքում այն թարգմանվում է մի շարք լեզուներով. դարասկզբին՝ 1612 թ.¹⁵ լեհերեն (թարգմանիչ՝ Սիմոն Վիտցկի), 1677 թ.՝ ռուսերեն, որոշ ժամանակ անց կատարվում է երկրորդ ռուսերեն թարգմանությունը¹⁶: Դրանից առաջ՝

¹² Ն. Ակիսյան. Ստեփանոս վարդապետ Լեւոյի, էջ 56:

¹³ Speculum exemplorum ex diversis libris in unum laboriose collectum. Deventriae, 1481.

¹⁴ „Speculum Magnum exemplorum ex plusquam LX authoribus pietate, doctrina et antiquitate venerandis, varisque tractatibus excerptum ab Anonimo quodam, qui circiter Annum Domini 1480 vixisse deprehenditur. Nunc per quendam patrem e Societate Jesu ab innumeris mendis et fastidiosis breviationibus vindicatum locupletatum. Diaci 1605 ap Joan Bellerum (in 49)“: „Speculum exemplorum“—ի «ամեն անանուն» (Anonimo quodam) կազմողի մասին տեղեկությունը, որը Հովհաննես Մայորը քաղել է «Հայելի օրինակաց» հրատարակության վերնագրից, անփոփոխ անցել է լեհերեն և ռուսերեն թարգմանությունների վերնագրերին, ապա հաստատվել նաև գրականագիտության մեջ (տե՛ս П. В. Владимиров. Великое Зерцало.—Из истории русской народной литературы 17-го века. М., 1881, с. 1): О. А. Державина. Великое Зерцало. М., 1965, с. 17 (այսուհետև՝ Великое Зерцало): Սակայն կաթոլիկական միջավայրում ծնունդ առած հրաշապատում ժողովածուների XVIII դարի հայերեն թարգմանությունների հետ ծանոթությունը մեղ հանգեցրեց այն համոզման, որ կաթոլիկ մատենագիրների շրջանում հայտնի է եղել «Հայելի օրինակաց»-ի հեղինակը: Այսպես, «Գիրք հրաշից» ժողովածուում, որպես «Հայելի օրինակաց»-ի հեղինակ բազմիցս հիշատակված է էներիկոս Գրանը. «Ջոր պատմ է էներիկոս Գրանն ի Հայելին օրինակաց», «Ջոր պատմ է էներիկոս Գրանն ի գիրս իւր, կոչեցեսլ «Հայելի օրինակաց» (Գիրք հրաշից ամենօրհնալ սուրբ աստուածածնին... Վենետիկ, 1772, հր. ԿՔ, ԿԴ, ԿԷ): Նույն անվան հիշատակությունը կա նաև այլ ձևով «Աղբիւր բարի» ժողովածուում. «Արդ՝ գրէ Հներիկոս Աճելկ-րաւեանն...» (Գիրք, որ կոչի Աղբիւր բարի..., Վենետիկ, 1722, էջ 341):

¹⁵ 1612 թ., որպես լեհերեն հրատարակության թվական, տե՛ս Jadwiga Rudnicka. Bibliografia powieści polskiej, 1601—1800 (Wrocław-Warszawa-Kraków, 1964) գրքում: Նույն թվականն է հիշատակում Ա. Վ. Լիպատովը (տե՛ս Формирование польского романа и европейская литература. М., 1977, с. 238): Օ. Ա. Դերժավինայի գրքում, որպես առաջին հրատարակության թվական, նշված է 1621-ը (տե՛ս Великое Зерцало, с. 20): Հետ Ֆադլիզա Ռուդնիցկայի դա լեհերեն թարգմանություն երկրորդ հրատարակության թվականն է:

¹⁶ Ռուսերեն թարգմանությունների մասին տե՛ս П. В. Владимиров. Указ. соч., с. 37—66, նաև՝ Великое Зерцало, с. 28—58.

1651 թ.¹⁷ «Մեծ հայելին» թարգմանվում է հայերեն՝ «Հայելի վարուց» խո-
րագրով: Հայերեն թարգմանության հեղինակն է Ստեփանոս Լեհացին:

Լատիներեն, լեհերեն, հայերեն թնագրերի համադրումը, լեհ խմբագիր-
ների հավելումները հաստատեցին Ստեփանոս Լեհացու 1662 թ. ինքնագիր
հիշատակարանի¹⁸ տեղեկությունը այն մասին, որ հայերեն թնագրի հիմքում
ընկած է «Մեծ հայելու» լեհերեն տարբերակը¹⁹:

Լեհացին կատարել է զույգների խիստ ընտրություն, առաջնությունը տա-
լով այն բարոյախրատական պատմություններին, որոնք նվիրված էին իշխա-
նավորների և հոգևորականության բարքերի քննադատությանը: «Հայելի վա-
րուց»-ում մեծ տեղ են զբաղում նաև արևելյան ծագում ունեցող նովելները,
հեթանոսային սյուժեներով լեգենդները, մարդկային արատները մերկացնող ու
դատապարտող զրույցները: Այդ մանրամասները շատ սիրված են եղել հայ
միջնադարյան ընթերցողի կողմից: Ժամանակի խոշորագույն պատմագիր
Առաքել Դավրիժեցու՝ «Հայելի վարուց»-ին տրված գնահատականը լավագույնս
է բացահայտում նրա տարածման և հաջողության գաղտնիքը. «Եւ յոյժ համեղ
և ախորժ են բանք այս գրոյս»²⁰, ասում է նա:

XVII—XVIII դդ. ձեռագրերը հեղեղված են «Հայելի վարուցի» ընդօրի-
նակություններով, առանձին զրույցներ և ամբողջ գլուխներ նրանից անցել են
այլ տիպի ժողովածուներ՝ տեղայնացվել և հաճախ միաձուլվել հնուց արդեն
հայ մատենագրությանը հայտնի սյուժեներին և ընկալվել որպես սեփական:
1702 թ. ժողովածուն հրատարակվեց²¹:

«Հայելի վարուց»-ի հետ մեկտեղ XVII—XVIII դդ. հայերեն ևն թարգ-
մանվում զրույցների բազմապիսի ժողովածուներ, որոնց մեծ մասը իր պատ-
մողական նյութով կապվում է «Հայելի վարուց»-ի հետ, իսկ մի մասն էլ՝ ներ-
կայացնելով այլ փոքրածավալ գրական ժանրեր, համալրում է հայ մատենա-
գրություն թափանցած պատմողական արձակի ամբողջական պատկերը:
Դրանց ուսումնասիրությունը թույլ տվեց նշված ժամանակաշրջանի թարգմա-
նական արձակը ըստ բնույթի խմբավորել հետևյալ կերպ.

1. Բարոյախրատական զրույցների հոգևոր ժողովածու («Հայելի վարուց»),
2. Բարոյախրատական զրույցների աշխարհիկ ժողովածու,
3. Հին իմաստասերների ասույթների ժողովածուներ,
4. Քարոզախոս, հրաշապատում, լեգենդար բնույթի ժողովածուներ,
5. Վարքավկայաբանական ժողովածու,
6. Քարոզգրքեր,
7. Անեկդոտատիպ հետաքրքրական, ծիծաղաշարժ պատմություններ:

«Մեծ հայելին» և բոլոր նմանատիպ ժողովածուները, այդ թվում և XII—
XVIII դդ. քարոզգրքերը, սկիզբ են առնում միջնադարյան հրաշապատում լե-
գենդար և XII—XIII դդ. հանրագիտարանային տիպի ժողովածուներից²²: Այդ
կարգի երկերից էին, օրինակ, մեծ հռչակ ստացած, հին և միջնադարյան դրա-
կանության համակարգման ձգտումով աչքի ընկնող Հակոբ Որագինեցու (XIII
դար) «Բանք Ոսկիականք»²³ վարքագրական ժողովածուն, որը նույնիսկ վե-

17 Այդ մասին տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Նորարար հաս. գիտ.» 1981, № 10.

18 Տե՛ս ձեռ. № 5131 (1662 թ.), էջ 368-րդ Ստեփանոս Լեհացու թարգմանությունների այդ-
գործերը հիշատակում է իր գրքում Հ. Միրյոյանը (նշվ. աշխ., էջ 101—103):

19 Մանրամասն տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Նորարար հաս. գիտ.» 1981, № 10.

20 Առաքել Դավրիժեցի. Պատմություն, էջ 408—409.

21 Տե՛ս Գիրք Հայելի վարուց, որ ասի Հարանց վարք, տպագրեցալ ի հայրապետութեան
տեառն նահապետի Հայոց կաթողիկոսի Դ թվին Քրիստոսի 1702, իսկ ըստ Հայոց ՌԺՍԱ,
մայիսի ամսոյ ԻԱ (21-ին) ի փառս մեծագոյնս աստուծոյ:

22 Տե՛ս Մ. В. В л а д и м и р о в. Указ. соч., с. 14—30.

23 «Բանք Ոսկիականք», Լեզու ձգտես էւն ինքուր Լեռնաձգես Բարեւոյն
զրեթե բոլոր Լեզուական: Լավագուն հրատարակութունն է-Սիմեոն (Հայ-
պետի, 1846 և 1890),

րածննդի շրջանում շարունակում է մնալ սիրված ժողովրդական գիրք²⁴, ապա միջնադարյան գրականության մեջ Գրիգոր Մեծի ուղղության, ժողովրդական սլավոնական ոճի ժառանգորդ Կեսարիոս Հայստերրախացու (XIII դար) շուրջ 750 զրույց պարունակող «Պատմութիւնք հրաշալեացն» ժողովածուն²⁵, Վինցենտ Բովացու (XIII դար) հանրագիտարանային բնույթի «Speculum Majus» ժողովածուն, հատկապես նրա առաջին մասը՝ «Պատմական հայելին» (Speculum Historial)²⁶։ Աշխարհիկ բնույթի ժողովածուներից էին Պետրոս Ալֆոնսասի (XII դար) «Երատեներ կղերիկոսին»-ը (Disziplina clericalis)²⁷, որի հիմքում ընկած են Հնդկա-արաբական բարոյախրատական զրույցներ, ապա «Գործք հռովմայեցվոց» (Gesta Romanorum)²⁸ ժողովածուն (XIII դար), որն, ըստ մասնագետների, Աստվածաշնչից, Բարոյախոսից և Հազար և մեկ գիշերից հետո Եվրոպայում ամենալայն ճանաչում գտած երկն է եղել²⁹։ Հրաշապատում, լեգենդար բնույթ ունեին հանգուցյալների հիշատակման անհրաժեշտությունը հաստատող ժողովածուները³⁰։ Այդ ժողովածուները (սինոդիկները), ծնունդ առնելով վաղ միջնադարում Բյուզանդիայում, հետագայում լայն տարածում գտան, առաջ եկան բազմազան և բազմաթիվ այդպիսի ժողովածուներ։ Նրանք նախատեսված էին ինչպես եկեղեցիներում, այնպես էլ նրանից դուրս՝ առանձին ընտանիքներում կարդալու համար։ Իրենց բնույթով այդ ժողովածուները մոտ էին Հայսմավուրքներին։ Սինոդիկում շատ հարուստ էր զրույցների և բարոյախոսական մտորումների մասը։ Նրանում արժարժվող թեմաներն էին ընդհանուր բնույթի զրույցները՝ հարուստների, բամբաստողների, վաշխառուների, հարբեցողների և այլ մեղավորների մասին։ Հետագայում այդ զրույցները և բարոյախոսական մտորումները դուրս մղեցին «հիշատակները» և դարձան պարզապես ընթերցանության գրքեր։ Քրիստոնեական ավանդությունների մեջ կարևոր տեղ էին գրավում Մարիամ Աստվածածինն նվիրված լեգենդները։ XI դարում, նրա պաշտամունքի ուժեղացման հետ, հրաշապատումների շարքում Աստվածածնի մասին զրույցները կենտրոնական տեղ են գրավում։ Արդեն Կեսարիոս Հայստերրախացու գրքի 12 բաժիններից մեկը նվիրված է Մարիամ Աստվածածնին³¹։ «Մեծ հայելու» աղբյուրներից մի մասը հայերեն էր թարգմանվել դեռևս վաղ միջնադարում (V դարում, Հարանց վարք), ապա XII—XIV դդ. և ավելի ուշ՝ XVII—XVIII դդ., իսկ մի մասն էլ ծանոթ էր հատվածաբար այլ ժողովածուներից։ Նվ, վերջապես, կար նաև բանավոր հաղորդման ուղին։

²⁴ М. Н. Голенищев-Кутузов. Средневековая латинская литература. Италит. М., 1981, с. 200.

²⁵ Caesarii Helsterbacensis monachi Dialogus miraculorum, textum recognovit J. Strange. 1-2, Köln-Bonn, 1851. Կեսարիոս Հայստերրախացու ժողովածուի մասին տե՛ս Ա. Я. Гуревич. Проблемы средневековой народной культуры. М., 1981, гл. 1.

²⁶ Վինցենտ Բովացու և նրա ժողովածուի մասին տե՛ս П. В. Владимиров. Указ соч., с. 30—36.

²⁷ «Երատեներ կղերիկոսին» ժողովածուից 10 զրույցների ոտներն թարգմանությունը տե՛ս Петр Альфонса. Наставление обучающемуся.—В кн.: Средневековые латинские новеллы 13-го века. Издание подготовила С. В. Полякова. Ленинград, 1980 (այսուհետ՝ Средневековые латинские новеллы), с. 308—331.

²⁸ Sicut Gesta Romanorum, Geschichten von den römern. Ein Erzählbuch des Mittelalters, erstmalig in vollständiger Übersetzung herausgegeben von Winfried Trillitzsch. Leipzig, 1979, S. 6—7. Ժողովածուի համառոտ ոտներն թարգմանությունը տե՛ս Средневековые латинские новеллы, с. 341.

²⁹ Средневековые латинские новеллы, с. 341.

³⁰ Սինոդիկի մասին տե՛ս Энциклопедический словарь, изд. Ф. А. Брокгауз, И. А. Ефрон. т. XXX. СПб., 1900, с. 36.

³¹ А. Я. Гуревич. Указ. соч., с. 49.

2. 1614 թ.³² Հակոբ Թոխաթեցին հայերեն է թարգմանում (ըստ երևույթին, լեհերենից) «Եօթ իմաստասիրաց պատմութիւնը»³³: Եթե «Հայելի վարուց»-ը պատկանում է բարոյախրատական գրույցների խմբի հոգևոր թեմին, ապա «Եօթ իմաստասիրաց պատմութիւնը» կամ «Գիրք պատմութեան կայսերն Փոնցիանոսին»-ն հին հնդկական ծագում ունեցող աշխարհիկ գրույցների շարք է: Ժողովածուն XVI—XVII դդ. այն եզակի թարգմանական երկերից է, որը համակողմանի քննության է առնվել³⁴:

«Եօթ իմաստասիրաց պատմութիւնը» մեծ տարածում է գտել թե՛ Արևելքում, թե՛ Արևմուտքում, այդ թվում նաև հայ միջնադարյան գրականության մեջ: Բավական է ասել, որ բազմաթիվ գրչագրերից զատ ժողովածուն ունեցել է 10 հրատարակություն: Ավելի ուշ այն հայերենից թարգմանվել է ուսսերեն, վրացերեն³⁵, ֆրանսերեն և թուրքերեն: Երկի հյուսիսը և կենդանի լեզուն, գրույցների աշխարհիկ ոգին և հետաքրքրաշարժ սյուժեն ապահովեցին նրա ժողովրդականությունը: Բազմաթիվ գրույցներ տեղայնացվեցին, խառնվեցին ժողովրդական ստեղծագործություններին: Մի քանի գրույց «Հայելի վարուց»-ի միջոցով անցան հայ մատենագրություն այլ խմբագրությամբ:

3. Հուլյն իմաստասերների ասույթները հայ մատենագրությանը հայտնի են հայ գրականության սկզբնավորման շրջանից:

XVII—XVIII դդ. թարգմանական գրականության մեջ նրանք բավական հարուստ են ներկայացված: Այդ փառքը ինքնին արդեն վկայում է հայ գրականության կողմից հեշտալուր ու դյուրամարս ժանրերի լրիվ յուրացման և օգտագործման մասին: Այստեղ կան. 1. Արևելահունական թեմին պատկանող ժողովածուներ, որոնք իրենց ծագումով ավելի վաղ շրջանի արգասիք են և ընդգրկում են հուլյն իմաստասերների ասույթներ, 2. Արևմտաեվրոպական տիպի ժողովածուներ, որը հիմնականում ամփոփված են հանրահայտ արևմտյան բարոյախոս հեղինակները և այն հեղինակները, որոնք ընդունված էին թե՛ Արևելքում, թե՛ Արևմուտքում, և, վերջապես, քրիստոնեական տիպի ասույթ-

³² Ա. Վ. Լիպատովի գրքում հայերեն թարգմանության թվականը սխալմամբ նշված է 1624 թ. (տե՛ս նշվ. աշխ., էջ 61, ծան. 32):

³³ Տե՛ս Գիրք պատմութեան կայսերն Փոնցիանոսին, և կնոջն, և որդւյն Գիողղեսիանոսին, և լեօթանց իմաստասիրաց: Տպագրեցեալ ...ի մայրաքաղաքն ըՍտամպուլ... ի ...ՌՃԸ (1731): Պաշտանվել է Հակոբ Թոխաթեցու հիշատակարանը, որ նա ասում է, որ այդ երկը թարգմանել է «ի լատինական գրոց» (տե՛ս Ղ. Ալիշան. Կամեսից. Վենետիկ, 1896, էջ 171): Ուսումնասիրողները, սակայն, նկատել են, որ հայերենը ավելի մեծ հարազատություն ունի լեհերեն թարգմանության հետ: Ն. Ակինյանը այդ հանգամանքը բացատրում է երկուսի հիմքում ընկած մի հնագույն լատիներեն բնագրով (տե՛ս Հինգ պանդուխտ տաղասացներ, էջ 141—202), մի բան, որ դեռևս կարող է լրացուցիչ ուսումնասիրության: Ղ. Ալիշանը, բերելով Հակոբ Թոխաթեցու հիշատակարանը, վերջում փակագծերում թողել է հետևյալ գրառումը. ի Բարիգ գրատուն «նույն տարին Յակոբ Թոխաթեցի թարգմանել է ի Զամոսցա և լեօթն իմաստասիրաց խոսքերն»: Այստեղ մեծ հայագետը վրիպմամբ իրարից բաժանել է Գիրք պատմութեան Փոնցիանոսին և «Եօթն իմաստասիրաց պատմութիւնը»: 1342 թ. լատինական ձեռագրից, որը հրատարակվել է 1475 թ. (Historia septem sapientem Romae) առաջ են եկել ևրկու տարբերակ. Historia Columniae Novercalis, 1489 և Pontianus Dicta aut facta septem sapientum, 1512 (տե՛ս A. B. Пинагов. Указ. соч., с. 61): Այս երկրորդը, որի վերնագրում կա և՛ Փոնցիանոսի, և՛ յոթ իմաստասերների հիշատակությունը, ըստ երևույթին, հիմք է հանդիսացել հայերեն թարգմանության համար:

³⁴ Տե՛ս Ն. Ակինյան. Հինգ պանդուխտ տաղասացներ, էջ 178—202:

³⁵ Այդ մասին տե՛ս Պ. Խաչատրյան. նշվ. աշխ., էջ 169, ծան. 59:

ների ժողովածուները³⁶, ինչպիսին էր XVII դարում երկրորդ անգամ թարգմանված Սիրաքի գիրքը³⁷ (թարգմանիչ Ստեփանոս Լեհացի)։

Հունական թևին պատկանող ժողովածուները լրացրին և հարստացրեցին հնուց հայ մատենագրությանը հայտնի իմաստասերների ասույթների, ժողովածուների շարքը։

Այդ ժողովածուներից էին.

Մատենադարանի № 1916 ձեռագրում գետեղված «Բանք իմաստասիրաց» քառահատոր ժողովածուն։ Առաջին անգամ այս ձեռագրի նյութերը շրջանառության մեջ է դրել Հ. Անասյանը³⁸։ «Բանք իմաստասիրաց» ժողովածուն 1633 թ. հայերեն է թարգմանել XVII դարի լեհահայ գաղութի հասարակական-մշակութային գործիչ, Լվովի ավագերեց Զաքարիան, որն օտար աղբյուրներում հիշատակվում է Զաքարիա Բեռնատովիչ անունով։ Հ. Անասյանը ենթադրում է, որ ժողովածուն, հավանաբար, թարգմանվել է լատիներենից³⁹։ Սակայն մեզ հաջողվել է պարզել, որ Զաքարիան իր երկը թարգմանել է լեհերենից, իսկ թարգմանության համար հիմք է ծառայել լեհ հեղինակ Բենյաշ Բուդնու (XVII դարի սկիզբ) ժողովածուն⁴⁰։

«Ասացուածք խոհեմականք...»-ը⁴¹ հնում թարգմանված «Բանք նախնի իմաստասիրաց»-ի⁴² XVII դարի նոր թարգմանությունն է։ Իտալացի հայագետ է. Տեղան այդ թարգմանության հեղինակ է համարում Ոսկան Նրևանցուն⁴³։ Մենք հակված ենք այն վերագրելու Հովհաննես Հովսեփյանին⁴⁴։

36 Ասույթների ժողովածուների մասին տե՛ս М. Н. Сперанский. Переводные сборники и изречения в славяно-русской письменности. Исследования и тексты. М., 1904. с. 1—67.

37 Տե՛ս ձեռ. № 708, նաև՝ Հայկական հանրագիտարան. հ. 11 («Ստեփանոս Լեհացի» հոդվածը)։

38 Տե՛ս Հ. Անասյան. Հայկական մատենագիտություն. հ. Բ, էջ 1472—1473։ Մեզ հայտնի է Զաքարիայի թարգմանության ևս մեկ գրչագիր (տե՛ս Սահակ Ա. Մուրատյան, Նաղարեթ Պ. Մարտիրոսյան. Ցուցակ ձեռագրաց Մշո Ս. Առաքելոց-թարգմանյաց վանքի և շրջագայից, ձեռ. № 413, էջ 155ա—207ր, Երուսաղեմ, 1967)։

39 Հ. Անասյան. նշվ. աշխ., էջ 1470։

40 Այդ մասին մանրամասն տե՛ս Ք. Տեր-Ղազարյան. «Բանք իմաստասիրաց»-ի մի նոր ժողովածու հայերեն թարգմանությամբ.— «Պատմա-բանասիրական հանգես», 1984, № 4, էջ 149—159։

41 Տե՛ս Գիրք վայելուչ և հարկաւոր..., Մարչիւեայ, 1695, էջ 125։

42 Տե՛ս Սոփերք հայկական. հ. Ա, Վենետիկ, 1853, էջ 29—59։

43 Տե՛ս է. Տեղա. Հելլեն իմաստասիրաց հատընտիր խրատք, թարգմանյալք ի հայ.— «Բաղմավեպ», 1894, էջ 132։

44 Այդպիսի ենթադրության է հանգել մեզից առաջ Ռ. Իշխանյանը, թեև այն փաստերը, որոնց վրա հենվում է նա, ոչ մի կապ չունեն «Ասացուածք խոհեմականքի» հետ։ «Ասացուածքի» վերջում զետեղված են ինը մանրապատումներ, որոնք Իշխանյանը դիտել է որպես նրա շարունակություն և, հենվելով այդ մանրապատումներում ժողովածու լատինաբան նախորդ գործածության փաստի վրա, եկել այն եզրակացության, որ «Ասացուածքի» թարգմանիչը Հովհաննես Հովսեփյանն է (տե՛ս Հայ գրքի պատմություն, էջ 516)։ Մեզ հաջողվել է պարզել, որ այդ ինը մանրապատումները «Գիրք վայելուչ» են ներմուծված «Նորագոյն ծաղիկից» (հմտ. Գիրք վայելուչ, էջ 125—143։ Նորագոյն ծաղիկ, էջ 120—124, 134—137, 142—143, 146, 153—155, 157—160, 164—166, 172—175, 187—190։ Այս ինը զրույցներից երկուսը զետեղվել են նաև «Հայկի վարուց»-ի հրատարակության մեջ «Վերջ» բառից հետո (տե՛ս Գիրք հայկի վարուց, էջ 331—334)։ Ամենայն հավանականությամբ նշված զրույցները «Գիրք վայելուչ» ներմուծել է ինքը Հովհաննես Հովսեփյանը, քանի որ այլ ոք այդ բանը արած լինել չէր կարող. «Նորագոյն ծաղիկն» ու «Գիրք վայելուչը» տպագրվել էին միաժամանակ՝ 1675 թ., մեկը՝ Հոռոմում, մյուսը՝ Նարսեղում։ Եվ պարզ է, որ «Գիրք վայելուչում» զետեղված զրույցները, լինելով Հովհաննես Հովսեփյանի թարգմանություն, այդ կարճ ժամանակամիջոցում չէին կարող անցնել ուրիշի ձեռք։ Եթե զրույցների հարցը լրիվ պարզաբանված է, ապա «Ասացուածքի» թարգմանչի վերաբերյալ

1768 թ. Հակոբ Նալյանը հայերեն է թարգմանում հույն իմաստասերների մի այլ ժողովածու՝ «Ասացուածք փիլիսոփայից»⁴⁵։ Սակայն նրա վաստակը հին շրջանի իմաստասերների ասույթների թարգմանության գործում չի սահմանափակվում միայն այդ ժողովածուով։ Լինելով ժամանակի ամենակրթված մարդկանցից մեկը, նա ուսուցողական նպատակով, օգտվելով անմիջապես բնագրերից, իր «Գանձարանում» և այլ բոլոր ստեղծագործություններում առատորեն օգտագործել է իմաստասերների ասույթների և միջնադարյան զրուցատիպ բազմաթիվ ժողովածուներ։ Այդ տեսակետից նրա գրական ժառանգությունը կարող է հատուկ ուսումնասիրության։

XVII դարում հայերեն է թարգմանվում իմաստասերների ևս մի ժողովածու, որն արդեն պատկանում է արևմտալատինական տիպի ժողովածուների շարքին և այդ առումով նորություն էր հայ մատենագրության համար։ Ահա այս մեկը՝ նույն միջավայրի ծնունդ լինելով, ինչ և «Մեծ հայելին», իր պատմողական նյութով անմիջապես առնչվում է «Հայելի վարուց»-ի հետ։ Խոսքը Հովհաննես Հուլովի կողմից 1671 թ. լատիններենից թարգմանված և 1675 թ. Հռոմում հրատարակված «Նորագոյն ծաղիկ զօրութեանց» ժողովածուի մասին է⁴⁶։ Գրքի անվանաթերթի հայերեն խորագրից հետո տպված է նրա լատիններեն անվանումը՝ «Flos virtutum»։ Թարգմանության աղբյուրի մասին այլ տեղեկություններ չկան։ Եվ դա այն պարզ պատճառով, որ խոսքը մի երկի մասին է, որը շատ մեծ ճանաչում է գտել արևմուտքում, հատկապես բարոյախրատական գրականության մեջ։ «Flos virtutum» ժողովածուն ստեղծվել է Հյուսիսային Իտալիայում, ըստ երևույթին Վենետիկում։ Մինչև 1500 թ. արդեն հայտնի է այդ գրքի 26 հրատարակություն⁴⁷։ Գրքի կազմողներն են Կեռուբինո դա Սպոլետոն, Զովաննի Անտոնիոն և Տոմազեո Լեոնին։

«Նորագոյն ծաղիկը» կազմված է հեթանոս և քրիստոնյա հեղինակների ասույթներից։ Ի տարբերություն արևելահունական տիպի ժողովածուների, որոնցում ամբողջ նյութը կրում է աֆորիստիկ բնույթ, «Նորագոյն ծաղիկը» այդ սեղմությունը չունի։ Ասույթները մնացել են նույնը, իսկ բարոյախրատական մասը ընդարձակվել է և առակները մեծ մասամբ փոխարինվել են նրանց ծավալուն տեսակով՝ նորավեպերով։ Վերջիններս քաղված են հին և միջնադարյան հեղինակների երկերից և ժողովածուներից։ Բոլոր զրույցները անխտիր սկսվում են նրանց հեղինակների կամ աղբյուրների հիշատակումով։

Զրույցների աղբյուրների շարքում են Եղոպոսը, Տրոյական պատմությունը, Հունաց պատմությունը, նաև «Մեծ հայելու» աղբյուրներից՝ «Հարանց վարքը», «Գործք հովմայեցւոցը»։ Վերջինից քաղված զրույցները «Նորագոյն ծաղիկում» գերիշխում են։

Թարգմանական երկերի հաջորդ խումբը, որի հետ կապվում է «Հայելի վարուց»-ը, հրաշապատում բնույթի ժողովածուներն են, որոնք մեծ տեղ են գրավում հատկապես XVII դարի թարգմանություններում։ Դարի 20-ական թթ. մինչև 70-ական թթ. իտալերենից հայերեն թարգմանվեցին և հրատարակվեցին այդ տիպի մի շարք ժողովածուներ. «Գիրք, որ կուշի Աղբիւր բարի»

կարելի է միայն ենթադրություններ անել։ Ավելի քան հավանական է, որ թարգմանիչը ասույթների նկատմամբ նախասիրություն ցուցաբերած և արդեն այդ կարգի փորձ ունեցող Հովհաննես Հուլովն է։

45 Տե՛ս Ասացուածք փիլիսոփայից հաւաքեալ ի Յակոբայ Աստուածաբան Կոստանդինոպոլսոյ պատրիարքի, ձեռ. № 6392, էջ 51ա—73բ։ Հ. Նալյանի այս թարգմանությունը գիտական շրջանառության մեջ է դրել Ա. Տեր-Ստեփանյանը (տե՛ս նրա Պոլսահայ մատենագրությունը X'—XVIII դդ. (աղբյուրագիտական և բանասիրական հարցեր), Թեկնածուական դիսերտացիա, 1965, էջ 154)։

46 Տե՛ս Նորագոյն ծաղիկ զօրութեանց թարգմանեցեալ ի Յովհաննիսէ վարդապետէ Պոստանդնուպոլսեցւոյ... 1671 ի Հռոմ։ Վերահրատարակվել է Վենետիկ, 1685, Կ. Պոլիս, 1724։

47 Տե՛ս М. Н. С перанскпй. Указ. соч., с. 527—533.

(1722 թ.), «Պատմագիրք հոգւոց հաւատացեալ ննջեցելոց»⁴⁸, «Պատմութիւնք հրաշալեացն»⁴⁹ (1724 թ.), «Դաշտիկ ծաղկալի»⁵⁰ (1727 թ.), «Գիրք հրաշից» (1772 թ.) Թվարկված երկերից միայն մեկում տեղեկություն կա բնագրի հեղինակի մասին. «Աղբիւր բարիի» կազմող-հեղինակն է Կառլո Ռիստլին: Մնացած բոլոր դեպքերում թարգմանիչները զանց են առել հեղինակների անունների հիշատակումը: Սակայն բավական ընդարձակ վերնագրերից արդեն երեւում է, որ գործ ունենք եվրոպական բարոյախրատական գրականության մեջ միջնադարում լայն տարածում գտած, վերը հիշատակված հոգեշահ ժողովածուների հետ:

Դրանցից էր Կեսարիոս Հայստերբախացու «Պատմութիւնք հրաշալեացն» գիրքը, որից բազմաթիվ զրույցներ են անցել «Մեծ հայելի»: Պարզվում է, որ այն հատընտիր թարգմանվել է հայերեն, թարգմանիչն է Հովհան Թոխաթեցին, որի երկու այլ թարգմանություններն են «Պատմագիրքն» ու «Դաշտիկ ծաղկալին»: Սակայն եթե այս վերջիններս մատենագիտական երկերում և ցանկերում արժանացել են թվարկման, «Պատմութիւնք հրաշալեացն» ընդհանրապես ոչ մի տեղ չի հիշատակվում որպես առանձին երկ, առավել ևս՝ որպես Կեսարիոս Հայստերբախացու ժողովածու: Պատճառը երևի այն է, որ այդ երկը զետեղված է «Պատմագրքի» հետ նույն գրքում և շապկի վերնագրում երկուսը միացվել են. «Պատմագիրք հոգւոց հաւատացեալ ննջեցելոց և հրաշալեացն սրբազնութեանց», և գիրքն ընկալվել է որպես մեկ միավոր: Կեսարիոս Հայստերբախացու հսկայածավալ ժողովածուից Հովհան Թոխաթեցու թարգմանության մեջ ամփոփվել է ընդամենը 42 գլուխ: Սակայն դա էլ բավական է այդ ժողովածուի մասին պատկերացում կազմելու համար: Գիրքը գրված է պարզ և մատչելի լեզվով, ժողովրդական բանավեպերի հարազատ գեղարվեստական հնարանների և արտահայտչամիջոցների օգտագործմամբ: Ինչպես նկատում է Ա. Յա. Գուրևիչը, Կեսարիոս Հայստերբախացու այդ երկը «միջնադարի ժողովրդական հավատալիքների լափազանց առժեքավոր վկայություն է»⁵¹:

«Պատմագիրքը» հանգուցյալների հիշատակին նվիրված միջնադարյան բազմաթիվ ժողովածուներից մեկն է: «Դաշտիկ ծաղկալիում», ինչպես և «Պատմագրքում», տեղեկություններ կան թարգմանված նյութի վերաբերյալ: Բայց ոչ մի խոսք կազմողի մասին: Սակայն այդպիսի տեղեկության հանդիպում ենք «Գիրք հրաշից»-ում, որտեղ աղբատասիրության թեմային նվիրված Մարիամ Աստվածածնի հրաշագործության հետ կապված գրույցի աղբյուրների մասին ասված է. «Զոր պատմեն Նւսեբիոս ի ժամանակագիրս իւր և հայրն Վաղեբիանոս Վէնէտկեցին ի «Դաշտն ծաղկալի...»⁵²:

«Գիրք հրաշից»-ի թարգմանիչն է Զաքարիա վարդապետ Ակնեցին: Այստեղ ևս հիշատակվում է, որ թարգմանության համար հիմք են հանդիսացել զանազան իտալացի հեղինակների պատմությունները: Նրանց շարքում քիչ տեղ չեն գրավում Կեսարիոս Հայստերբախացու ժողովածուից քաղված զրույցները:

Այս տիպի ժողովածուները նախատեսված են միջնադարյան հասարակության ամենալայն շրջանների համար: Այստեղ կապը «Մեծ հայելու» հետ շատ ավելի ցայտուն և բացահայտ է: Ավելին՝ ոչ միայն անխտիր բոլոր ժողովածուներում հանդիպում են «Հայելի վարուցի» զրույցների բազմաթիվ զուգահեռները և աղբյուրները, այլև որպես աղբյուր նրանցում հաճախ ուղղակի հանվանք վկայակոչվում են «Հայելի օրինակացն» ու «Մեծ հայելին»:

⁴⁸ Տե՛ս Պատմագիրք հոգւոց հաւատացեալ ննջեցելոց և հրաշալեացն սրբազնութեան... ի հայկական բարբառն շարադրեցեալ աշխատութեամբ Տեառն Յօհանու եպիսկոպոսի Թոխաթեցոյ, Վենետիկ, 1724:

⁴⁹ Պատմութիւն հրաշալեացն սրբազնութեան. տե՛ս «Պատմագիրք», էջ 354:

⁵⁰ Տե՛ս Դաշտիկ ծաղկալի..., Վենետիկ, 1727:

⁵¹ Տե՛ս А. Я. Г у р е в о й. Указ. соч., с. 49:

⁵² Գիրք հրաշից... հր. Կն:

ի տարբերությունն «նորագույն ծաղիկի», որի զրույցները մեծ մասամբ քաղված են աշխարհիկ բնույթի հին և միջնադարյան ժողովածուներից ու ընդհանուր ճանաչում գտած քրիստոնեական աղբյուրներից, հրաշապատում ժողովածուների նյութը հիմնականում քաղված է կաթոլիկ հեղինակներից և սրանց խմբագիրներից:

Հրաշապատում ժողովածուները իրենց բնույթով միջանկյալ տեղ են գրավում քարոզքների և «Մեծ հայելու» միջև. այստեղ դեռ զրույցը չի անջատվել քարոզից: Քարոզքների համեմատությամբ սրանք այնուամենայնիվ զրույցների (հիմնականում հրաշապատում) լեզունգար բնույթի շարք են, որոնց, սակայն, անպայման նախորդում, հաջորդում կամ էլ խառնված է քարոզը, այն, ինչը «Մեծ հայելու» վերացել է կամ վեր է ածվել փոքրիկ (1—2 նախադասությունից բաղկացած) մուտքի կամ վերջաբանի՝ ամբողջ քարոյախրատական իմաստը պարփակելով հենց իրեն՝ զրույցի մեջ:

Մյուս կողմից, սրանք իրենց կառուցվածքով մեծ ընդհանրություն ունեն քարոզքների, ինչպես նաև արևմտյան տիպի իմաստասիրական ասույթների ժողովածուների հետ: Յուրաքանչյուր թեմային նվիրված գլուխը սկսվում է բնաբանով. հրաշապատում ժողովածուներում և քարոզքներում՝ Նոր կտակարանից, ասույթների ժողովածուներում՝ հին փիլիսոփաների կամ եկեղեցու խոշորագույն տեսաբանների երկերից: Սակայն բոլոր դեպքերում այդ բնաբանները վերաբերում են մարդկանց արատներին ու առաքինություններին և, վերջին հաշվով, խմբավորված են տաս պատվիրանների շուրջ: Բնաբանից հետո դալիս է քարոզը կամ, եթե խոսքը ասույթների ժողովածուների մասին է, հին փիլիսոփաների մտորումները: Գլուխը ավարտվում է զրույցով:

XVII դարում հայ թարգմանական արձակը համալրվում է նաև լատինական սրբախոսական հուշարձաններով: Դեռևս XII—XIV դդ. հայերեն էին թարգմանվել լատինական արևմտյան եկեղեցու առանձին խոշոր գործիչների վարքերը՝ Գրիգոր Մեծի⁵³, Ֆռանչիսկոսի⁵⁴, XVII դարից Հովհաննես Հոլովի թարգմանությամբ մեզ է հասել «Առաքաստ ամբողջութեան»⁵⁵ վարքագրական ժողովածուն, ուր ամփոփված են 36 սրբուհիների ընդարձակ վկայաբանությունները: Մատենադարանում պահվում է այդ երկի մի գրչագրի ժողովածուի մի մասը նվիրված է վաղ քրիստոնեական շրջանի նահատակներին, որոնք դասվել են ընդհանուր եկեղեցական սրբերի շարքը: Այդ սրբուհիների վկայաբանությունները հայերեն են թարգմանվել հունարենից դեռևս V, ապա XII դդ.: «Առաքաստի» մի զգալի մասը (մոտ կեսը) կազմում են արևմտյան եկեղեցու սրբուհիների վկայաբանությունները: Սա արդեն ամբողջությամբ նորություն էր հայ մատենագրության համար: Ժողովածուում զետեղված են նաև Հռիփսիմեի և Գայանեի վկայաբանությունները:

XIII—XIV դդ. կաթոլիկ միսիոներների (Բարդուղիմեոս Մարաղացի, Պետրոս Արագոնացի) քարոզքների⁵⁶ միջոցով հայ մատենագրություն ներմուծվեցին բազմաթիվ զրույցներ «Բանք ոսկիականք», «Գործք հոովմայեցվոց» և այլ ժողովածուներից, ինչպես նաև հին իմաստասերների ասույթների ժողովածուներից: Զրույցներ Բարդուղիմեոս Մարաղացուց արդեն հանդիպում

⁵³ Տե՛ս թեկուզ ձեռ. № 3521, Արեգի զ և մարտի ժո վարք և յիշատակ սքանչելի առն Գրիգորի պապին Հոովմայ, ձեռ. № 3569, էջ 137ա—147ա:

⁵⁴ Տե՛ս ձեռ. № 1736, Բռնավենտուր կարգինալ Պատմութիւն վարուց Ֆռանչիսկոսի:

⁵⁵ Տե՛ս ձեռ. № 1915, Ժողովածուն զետեղված է հիշյալ ձեռագրի էջ 3ա—134ա: Առաջին անգամ այն հիշատակում է Հ. Անասյանը (տե՛ս Հայկական մատենագիտություն. հ. Ա, Երևան, 1959, էջ 1058):

⁵⁶ Տե՛ս, օրինակ, Բարդուղիմեոս Մարաղացի. Քարոզքիք (ձեռ. № 2260), նաև՝ Առադոնացու Բարդուղիմեոսի և Պետրոսի խրատականք և հոգեշահք քարոզք, Վենետիկ, 1734:

են Գրիգոր Տաթևացու երկերում⁵⁷։ Բազմաթիվ պատմություններ Բարդուղիմեոսից անցել են Վարդանի ուշ շրջանի գրչագիր ժողովածուները⁵⁸։

XVII—XVIII դդ. միարարական շարժման աշխուժացման պայմաններում առավել շատ թարգմանվող գրքերից էին հենց քարոզների տարբեր ժողովածուները։ Այստեղ անդրադառնանք միայն բանասիրական ճշտումների կարոտ Հակոբ Որագինեցու «Բանք ոսկիականքի» հայերեն թարգմանությանը։ Եթե դատելու լինենք վերնագրից, ապա պետք է ընդունենք, որ XVIII դարում հայերեն է թարգմանվել Որագինեցու նվրոպայում մեծ հռչակ ստացած վարքագրական ժողովածուն։ 1733 թ. Ղուկաս Խարրերդցին թարգմանում է Հակոբ Որագինեցու այդ երկի անվանումը կրող մի ժողովածու⁵⁹։ Սակայն, ինչպես պարզվեց, դա Որագինեցու վարքագրական ժողովածուն չէ, այլ այդ վերնագրով հայերեն թարգմանված նրա քարոզգիրքը։ Ձեռագրերում պահպանվել են Որագինեցու ևս երկու քարոզների ժողովածուների թարգմանություններ նույն անվամբ⁶⁰։

Կարելի է ենթադրել, որ «Բանք ոսկիականքի» անվան տարածման պատճառը եղել է Հակոբ Որագինեցու գրական ժառանգության լատիներեն հրատարակության մատենաշարի անվանումը։ Այս հաստատվում է «Բանք և ճառք սրբոց տոնախմբութեանց» ժողովածուով, որը, ինչպես երևում է ձեռագրի առաջին էջից, թարգմանված է 1684 թ. լատիներեն հրատարակությունից «...ի տպարանի Յոհան Մաթինի ի ներքոյ նշանի Ոսկիական գրքոյս, 1684»⁶¹։

Որագինեցու քարոզգրքերում, ինչպես և նրա «Բանք ոսկիականքում» տիրում է նույն ունիվերսալիզմի ոգին։ Հին իմաստասերների ասույթների ժողովածուներ, եկեղեցու խոշոր հեղինակությունների երկեր, հոռմեական շրջանի պատմական երկեր և այլն. ահա այն հենքը, որի վրա խարսխված են Որագինեցու քարոզգրքերը։

Վերջապես կանգ առնենք «Միծաղական պատմությունների» վրա։ Միծաղական պատմությունները կամ «Ֆացետիաները» առաջ են եկել XII—XIII դդ., ապա մեծ տարածում և ճանաչում դուրս է գրել Վերածննդի ժամանակաշրջանում Պողոս Բաշտլինիի⁶² (XV դար) ժողովածուի շնորհիվ։ Այդ երկի նմանությամբ հետագայում ստեղծվեցին շատ ժողովածուներ, որոնցից առավել հայտնիներն են Բերեյի⁶³, Ֆրիշլինի, Մելանդրի ժողովածուները։ Իտալիայում գտնվեցին Բաշտլինիի հետևորդներ՝ Դոմինիկը, Կարբոնեն և այլք։

1766 թ. իտալերենից հայերեն թարգմանվեց «Յաղագս ծիծաղական պատմութեանց» ժողովածուն, թարգմանիչ՝ Պետրոս Կոստանդնուպոլսեցի։ Ժողովածուն հայտնաբերել և հրատարակել է գրականագետ Արմենուհի Սրապյա-

57 Գրիգոր Տաթևացի. Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր. Կ. Պոլիս, 1741, էջ 628. սկիզբ. «որպէս ասեն վարդապետք վասն փողոյն, թէ այնպէս սարսփելի է...» հմտ. Բարդուղիմեոս Մարաղացի Քարոզգիրք, ձեռ. № 2260, էջ 218ր. սկիզբ. «թագաւոր ոմն, որ բնաւ ոչ ուրախանայր»։

58 Տե՛ս ն. Մանուկյան. Բարդուղիմեոս Մարաղացու «Քարոզգիրք» առակների կապը միջնադարյան հայկական առակագիրների հետ.— ԶՄՄ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.» 1986, № 3։

59 Տե՛ս ձեռ. № 4828, Բանք ոսկիականք և զեղեցկազոյնք, յարդարեալ և ճոխացուցեալ զանազան վարդապետութեամբ սուրբ գրոց սակս քարոզութեան բոլորի տարւոյն... Կոստանդնուպոլիս, 1733։

60 Տե՛ս Բանք ոսկիականք ի վերայ Քառասորդականաց... (ձեռ. № 6252), նաև՝ Բանք և ճառք սրբոց տոնախմբութեանց... (ձեռ. № 385)։

61 Ձեռ. № 385։

62 Բուսերեն թարգմանությամբ տե՛ս Под жо Брачолни. Фацетии. Перевод с латинского, коментарий и вступительная статья А. К. Дживелегова, М.—Л., 1970,

63 Բուսերեն թարգմանությամբ տե՛ս Бебелъ. Фацетии. М., 1970.

ներ⁶⁴։ «Միծաղական պատմությունները» առնչվում են «Հայելի վարուց»-ի անեկդոտատիպ աշխարհիկ բնույթի զրույցների հետ։

Անշուշտ, հոգեվածում ընդգրկված ժողովածուներով չի սահմանափակվում XVII—XVIII դդ. թարգմանությունների ցանկը։ Զեռագրերում հանդիպում են նորանոր թարգմանություններ։ Սակայն առ այսօր մեր ձեռքի տակ ձեռք թարգմանությունները բոլորն էլ պատկանում են վերը հիշատակված թարգմանական երկերի այս կամ այն խմբին։ Միայն XVIII դարի վերջին հայերը սկսում են թարգմանել ժամանակակից եվրոպական գրականության նմուշներ, որոնց հիմքում ընկած էին, սակայն, նույն անտիկ սյուժեները։ Դրանցից էին ֆրանսիական կլասիցիստական արձակի նշանավոր երկերից Ֆենելոնի «Տելեմաք» վեպը⁶⁵, ռուսերենի միջնորդությամբ հայերեն թարգմանված հռոմեական հեղինակ Կվինտուս Կուրցիուս Ռուֆուսի (I դար) «Գիրք պատմութեանց մեծին Աղեքսանդրի» 10 հատորանոց երկի առաջին հատորը։ Այդ երկի հիմքում ընկած է հայ միջնադարյան գրականության մեջ մեծ տարածում գտած Կալիսթենեսի վեպը։ Կվինտուս Կուրցիուսը այն զարդարել է «բարձր» լատինական հռետորականությամբ⁶⁶։

Ամփոփենք մեր ասածը։

XVII—XVIII դդ. թարգմանական արձակը հիմնականում ներկայանում է բարոյախրատական տարբեր տիպի ժողովածուներով։ Բարոյախրատական բնույթը պայմանավորել է թարգմանական գրականության լայն ընդգրկումը՝ անտիկ շրջանի ժողովածուներից մինչև ուշ միջնադարի «ծիծաղական պատմությունները»։ Այդ թարգմանական երկերը հայ մատենագրություն ներմուծեցին միջնադարյան եվրոպայում շրջանառության մեջ եղած գեղարվեստական արձակի զգալի մասը՝ այդ թվում Ստեփանոս Լեհացու թարգմանության մեջ չընդգրկված «Մեծ հայելու» և նրա նախատիպի «Հայելի օրինակացի» բազմաթիվ զրույցներ, ինչպես նաև մեզանում հնուց հայտնի զրույցների այլ խմբազրույթուններ։ Սրանք բուն հայկական զրույցների, վարքերի, վկայաբանությունների և այլ փոքրածավալ ժանրերի նմուշների հետ հող պատրաստեցին հայ նոր գրական տեսակների (նբրավեպ, պատմվածք) զարգացման համար։

⁶⁴ Ցաղագս ծիծաղական պատմութեանց, թարգմանեցեալ յիտալական լեզուէ ի հայ բարբառ ի Պետրոս վարդապետէ Կոստանդնուպօլսեցւոյ. տե՛ս Արմենուհի Արապյան. Հայ միջնադարյան զրույցներ. Երևան 1969, էջ 326—335։

⁶⁵ Տե՛ս Պատմութիւն կամ պատահարք Թէլէմաքի որդւոյ Հյուլիսի արարեալ և շարադրեալ ի մեծէ Յրանչեսթո Ֆէնէլօնէ արհիեպիսկոպոսէ Սալիսեաքի... թարգմանեալ ի գալլիացոց և յիտալիացոց ի հայ լեզու շանիւ և աշխատասիրութեամբ Մարդար Զաքարիայի խօճէնց Երևանցւոյ յամի տեառն 1790 և Հայոց ՌՄԼԹ...

Հատոր Առաջին

Ի ստեթօ Փէթրպուրգ (ձեռ. № 2907)։

⁶⁶ Տե՛ս Գիրք պատմութեանց մեծին Աղեքսանդրի թագաւորին Մակեդոնացւոյ, արարեալ Կուլինդոս Կուրտոս լաթին պատմաբանէ... (ձեռ. № 2870, էջ 1—449ա)։ Իրականում երեի դա առաջին հատորը չէ, քանի որ երկու առաջին գրքերը, հինգերորդի վերջը, վեցերորդի սկիզբը չեն պահպանվել (տե՛ս Энциклопедический словарь, изд. Брокгауз, Ефрон, т. XIVa, с. 876, Квинт Курций Руф)։ Այդ թարգմանության մասին տե՛ս նաև Հ. Անասյան. Հայկական ձատենագրություն. հ. Ա, էջ 570։ Անասյանի կողմից բերված վերևագիրը փոքր-ինչ տարբերվում է վերը հիշատակվածից։ Հստ երևութիւն նա. ձեռքի տակ է ունեցել ուրիշ ձեռագիր։

**«ВЕЛИКОЕ ЗЕРЦАЛО» И АРМЯНСКАЯ ПЕРЕВОДНАЯ
ХУДОЖЕСТВЕННАЯ ПРОЗА XVII—XVIII ВЕКОВ****К. С. ТЕР-ДАВТЯН****Резюме**

В статье на основе новых, ранее неизвестных рукописных переводов и малоизвестных старопечатных изданий сделана попытка восстановить состав переводной художественной прозы XVII—XVIII вв., которая в основном представлена разного рода нравоучительными сборниками повествовательной прозы. Нравоучительный характер обусловил широкий охват переводной литературы, начиная со сборников изречений мудрецов античного периода и кончая «фасетиями» позднего средневековья. В армянской литературе, наряду с «Историей о семи мудрецах», особую популярность приобрел сборник «Великое Зерцало». Переводчик Степанос Лехаци.

Переводные произведения привнесли в армянскую литературу значительную часть европейской средневековой повествовательной прозы, в том числе множество не вошедших в перевод Степаноса Лехаци новелл из «Великого Зеркала», а также другие редакции известных на армянской почве преданий, легенд. Они вместе с подлинно армянскими сказками, житиями и мученичествами и другими образцами литературных жанров малых форм подготовили почву для развития в армянской литературе новых литературных жанров.